ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» հոկտեմբերի 2014թ. N 206

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.22-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի փետրվարի 4-ի N36 որոշմամբ հաստատված պլանի 7.2.1-ին կետը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության համակարգի կատարելագործմանն ուղղված հրամանատարաշտաբային ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման նպատակով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում 2014 թվականի նոյեմբերի 13-14-ին նախապատրաստել և անցկացնել <<ՈՒժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը>> թեմայով հրամանատարաշտաբային ուսումնավարժություն:
2. Հաստատել հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավար կազմը՝ համաձայն հավելվածի:
3. ՈՒսումնավարժությանը ներգրարվել՝
   1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը.
   2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային տարահանման հանձնաժողովը.

3) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչությունը.
4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Արմավիրի զինվորական կայազորը.
5) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության<<Պետական հակահամաճարակային տեսչության>> Արմավիրի մարզային փորձագիտական լաբորատորիան.
6) <<Վաղարշապատի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերությունը.
7) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժինը.
8) <<Հայկական էլեկտրացանց>> Փակ բաժնետիրական ընկերության <<Մուսալեռ>> մասնաճյուղի <<Էջմիածին էլ.ցանցը>>.
9) <<Հայջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերության Վաղարշապատի տարածքային տեղամասը.
10) <<Գազպրոմ Արմենիա>> փակ բաժնետիրական ընկերության Էջմիածնի գազի գրասենյակը.
11) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար, Մերձավան, Այգեկ, Բաղրամյան (Էջմ.), Արևաշատ և Մուսալեռ գյուղական համայնքները:

4. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին (Ա. Ամիրջանյան)՝

1) մշակել և մինչև 2014թվականի հոկտեմբերի 24-ը Հայսատանի Հանրապետության Արմավիրի մարզպետի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի փաթեթը.

2) կազմակերպել ուսումնվարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց նախապատրաստումը՝ համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի.

3) ճշտել <<Ուևժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը>>.

4) ճշտել համայնքների և կազմակերպությունների կողմից հատկացվող ուժերն ու միջոցները և դրանց օգտագործման կարգը.

5) ճշտել փոխգործողությունների պլանները.

6) ուսումնավարժությունը պատրաստ լինելու մասին զեկուցել նոյեմբերի 12-ին:

5. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալին (Մ. Քարտաշյան)՝

1) կազմակերպել սույն որոշման և ուսումնավարժության փաստաթղթերի փաթեթի ժամանակին առաքումը ուսումնավարժության մասնակիցներին.

2) ապահովել ուսումնավարժության մասնակից մարմինների ղեկավարների ներկայությունը ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանով նախատեսված միջոցառումներին.

3) վերանայել և ճշգրտել մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի անդամների խնդիրները, գործառույթներն ու իրավունքները.

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշտել համապատասխան պլանները, համալրել արձագանքող ուժերի անձնակազմը անհրաժեշտ

գույքվ և հանդերձանքով.

2) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած աշխատանքների մասին.

3) գործնական միջոցառումների իրականացման ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները.

4) արձագանքող ուժերը բերել պատրաստ վիճակի:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Արմավիրի մարզպետ

ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալ՝

Մ. Քարտաշյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ.

ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝

Ա. Ամիրջանյան

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ.

ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալ նյութատեխնիկական ապահովման գծով՝

Վ. Մկրտչյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ

Խաղարկման խմբի ղեկավար՝

Զ. Բարսեղյան

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրենի պետ– վարչության պետի տեղակալ

անդամ՝

Վ. Պողոսյան

Հայաստանի Հանրապետության
արտակարգ իրավիճակների
նախարարության փրկարար ծառայության
Արմավիրի մարզային փրկարարական
վարչության ճգնաժամային կառավարման
կենտրոնի կրտսեր հրահանգիչ

Վերլուծական խմբի ղեկավար՝

Ա. Կարապետյան

Հայաստանի Հանրապետության
արտակարգ իրավիճակների
նախարարության փրկարար ծառայության
Արմավիրի մարզային փրկարարական
վարչության Վաղարշապատի ՀՓՋ
հրամանատար

Կապի խմբի ղեկավար՝

Թ. Ասլամյան

<<ԱրմենՏել>> փակ բաժնետիրական
ընկերության ԿՏԿ Արմավիր– Բաղրամյան
ուղղության պետ

անդամ՝

Ա. Հարությունյան

Հայաստանի Հանրապետության արտակարգ
իրավիճակների
նախարարության փրկարար ծառայության
Արմավիրի մարզային փրկարարական
վարչության ճգնաժամային կառավարման
բաժնի հրահանգիչ

Միջնորդ՝

Ս. Հովհաննիսյան

Հայաստանի Հանրապետության արտակարգ
իրավիճակների նախարարության փրկարար
ծառայության Արմավիրի մարզային
փրկարարական վարչության բնակչության
պաշտպանության բաժնի հրահանգիչ

Միջնորդ՝

Վ. Սրեյան

Հայաստանի Հանրապետության արտակարգ
իրավիճակների նախարարության փրկարար
ծառայության Արմավիրի մարզային
փրկարարական վարչության բնակչության
պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ

Միջնորդ՝

Գ. Ղուկասյան

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ

Միջնորդ՝

Գ. Մկրտչյան

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման բաժնի հրահանգիչ

Միջնորդ՝

Վ. Մկրտչյան

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***